**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 15.03.2018թ.

ժամը 15:50

Ի գիտություն.

Սույն ընթացակարգի մասով 2018թ. մարտի 7-ին «Ռինո» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք, պահանջելով․

1. Որոշում ընդունել ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի կողմից կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու մասին:

2. Որոշում ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ դադարացնելու մասին, և/կամ որոշում ընդունել նոր գնման ընթացակարգ կազմակերպելու մասին:

3. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել փոփոխություններ կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ, հաշվի առնելով ներկայացված հիմնավորումները կամ փոփոխություններով հանդերձ կազմակերպել նոր գնման ընթացակարգ:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածին համապատասխան որոշում ընդունել ընթացակարգի կասեցման վերաբերյալ:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ բողոքի մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ, ուստի հաշվի առնելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց գնման գործընթացը կասեցնել, մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելը:

12.03.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը միջնորդությամբ դիմել է բողոքարկման խորհրդին՝ հայցելով հանել գնման գործընթացի կասեցումը, քանի որ գնման գործընթացի կասեցումը էապես կխաթարի մատակարարման բնականոն ընթացքը և բացասաբար կազդի զինված ուժերի ավտոտեխնիկայի մարտունակության ապահովման վրա:

15.03.2018թ. բողոքարկման խորհուրդը քննելով ՀՀ պաշտպանության նախարարության միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, որոշեց բավարարել միջնորդությունը՝ հանելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի կասեցումը:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը 15.03.2018թ. որոշեց սկսել սույն ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հայտերի գնահատումը:

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի սպա, մայոր Ս. Ստեփանյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին***

*(Ա. Ամիրյան)*

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

2.« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**1. Տեղեկություններ [www.armeps.am](http://www.armeps.am) կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

*(Ա. Ամիրյան)*

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգով սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Արպանիվ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:.*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

*(Ա. Ամիրյան)*

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

*(Ա. Ամիրյան)*

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

| Չ/Հ | Ապրանքի նվանում | Չ/Մ | Քանակ | Նախահաշվային ընդհանուր գին | «Արպանիվ» ՍՊԸ-ի առաջարկ | | I-ին տեղ զբաղեցրած մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | |
| 1 | Ավտոմեքենաների պահեստամասեր (Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US 190) | հատ | 1100 | 88000000 | 72231500 | 86677800 | «Արպանիվ» ՍՊԸ |
| 2 | Ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադող 225/75R16 համաեզրոն) | լրակազմ | 1600 | 115200000 | 93064000 | 111676800 | «Արպանիվ» ՍՊԸ |
| 3 | Ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադող 12.00-18) | լրակազմ | 780 | 128700000 | 106468700 | 127762440 | «Արպանիվ» ՍՊԸ |
| 4 | Ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադող 12.00-20) | լրակազմ | 708 | 120360000 | 97230820 | 116676984 | «Արպանիվ» ՍՊԸ |
| 5 | Ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադող 425/85R21) | լրակազմ | 582 | 133860000 | 106602030 | 127922436 | «Արպանիվ» ՍՊԸ |
| 6 | Ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադող 14.00-20) | լրակազմ | 1032 | 134160000 | 111626280 | 133951536 | «Արպանիվ» ՍՊԸ |

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «Արպանիվ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մասնակցում էր նիստին, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, ընթացակարգի հրավերի [illegible] կետերը, կազմակերպեց բանակցություններ և մասնակցին առաջարկեց նվազեցնելու առաջարկված գինը: Մասնակիցը հրաժարվեց նվազեցնելու առաջարկված գինը և այն թողնվեց առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

*(Ա. Ամիրյան)*

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 16.03.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում բոլոր չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Արպանիվ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատով նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պահանջներով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

*(Ա. Ամիրյան)*

5.1 Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

*(Ա. Ամիրյան)*

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

Գնահատող (ԳԱՊ) Հ. Հարությունյան

Գնահատող Ս. Ստեփանյան

Գնահատող Ա. Սիմոնյան

Գնահատող Հ. Բարսեղյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան

16.03.2018թ.